

մէջ, հաւաքեց բոլոր գորութիւնը բանական պատճառաբանութեան եւ սիրոյ՝ իրաւունքի հիմնական կէտերուն շուրջ, վերաստեղծելու համար նոր ընտանիք, մը – քանի որ ընտանիքի հարազատ պատկերն անգամ հետզհետէ կը նստմանար – ուր մարդը ապրէր գիտակից իր իրաւունքներուն, եւ իր յարաբերութիւնները մերձաւորին հանդէպ՝ չդառնային այլասերած բիրտ եւ անողոք վայրագութիւն մը, այլ մանաւանդ թէ մարդկային ընկերութեան իսկական շաղախը ըլլար դարձեալ այն սուրբ սէրը, զոր կ'ուզէ մեր Երկնաւոր Հայրը:

Կեանք, սէր, խաղաղութիւն. գերբնական կեանք, աստուածային սէր, հոգեպարար խաղաղութիւն. ահա՛ Պիոս ԺԲ-ի գաղափարականը. եւ շուրջ քսան տարի շարունակ կռուեցաւ այս գաղափարականով. ահա՛ իր պատերազմը: Եւ ասով, քաղաքակրթութեան վերաշինութեան շարժումին մէջ կատարեց հսկայ դեր մը:

Եթէ հոետորութեամբ՝ Ոսկեբերանեան կամ Պոսուէական վեհ շունչ մը ունէր, եթէ իրաւագիտական եւ աստուածաբանական հմտութեամբ՝ Ս. Օգոստինոսի կրնար հաւասարիլ, բայց ամէնէն աւելի ինք է՝ եւ կը մնայ ժիր եւ անխնայ դեկավարը այն շարժումին, որով – ինչպէս ըսած է Սոլովիեւ՝ ոռոտ ամենամեծ իմաստասէրը – Հոռմը այս իբրեւ երրորդ անգամ՝ պիտի վերակազմէ Եւրոպական քաղաքացիական միութիւնը. միութիւն մը՝ հիմնուած ընկերական արդարութեան վրայ, ուր անաստուած ու նիւթապաշտ գաղափարները թօթափած, պիտի համերաշխօրէն եղբայրանան ամէնքը, ընկերական ազատ կարգերու տակ. եւ պիտի հնչէ Պեթհովենեան համերգը՝ սիրոյ եւ եղբայրութեան, ներդաշնակ ձայներու զմայելի յափշտակութեան մէջ: Զարմանալի պիտի չըլլայ անշուշտ այստեղ նկատել՝ որ հանգուցեալ Քահանայապետը, միշտ իր մահուան նախօրեակին, լուսաւոր վայրկեանի մը, փափաքած է որ նուագուի Պեթհովենի մէկ համերգը: Բայց ամէնէն աւելի այն սրբազան համերգն է որ պիտի հնչէ, հրեշտակային ա՛յն երգը, զոր Յիսուսի մտորին անջեւ երգեցին Երկնային գորութիւնները, եւ զոր այս ՄԵԾ Քահանայապետը կը փափաքէր իրագործել այս երկրիս վրայ. ու տասնեւին անգամ քարոզեց այդ խորհրդաւոր երգին իմաստը. « Փառք ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հանութիւն »:

Վստահ ենք որ ան հիմա երկնիէն ալ կը շարունակէ իր հզօր ազդեցութիւնը եւ բարեխօսութիւնը, որպէսզի Ս. Եկեղեցին օրէ օր աւելի պայծառանայ, եւ իրականանայ իր սուրբ երազը համեղբայրութեան. մանաւանդ թէ Քրիստոսի իսկ նուիրական իդար՝ թէ սիրեցէ՛ք զիրար, միացէ՛ք իրարու հետ:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՂՕԹԱՄԱՏՈՅՅԻՆ

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԱՂՕԹԱՄԱՏՈՅՅԻՆ ԵՒ ԻՐ ԿԱԶՄԱՌՈՐՈՒՄԸ

(Շար. տես «Բազմավեպ» 1958, թ. 3-5, էջ 83)

ԳԼՈՒԽ Ա.

ԱՂՕԹԱՄԱՏՈՅՅԻՆ ԱՆՈՒՆԸ

Ներկայ մեր աշխատութեան Ա. Մասին մէջ նկատեցինք հասարակաց աղօթքի նիւթերը՝ ընդհանուր եղանակով: Այժմ կ'անցնինք քննելու աղօթամատենին յօրինման պատմութիւնը, ըստ ծրագրին զոր դրինք մեր յառաջարանին մէջ, եւ կը սկսենք նախ իր անունէն:

Անոր հնագոյն յորջորջումն ունինք Ս. Շուշանիկի վկայարանութեան մէջ, որ շարադրութիւն է Ե. դարու աղանատես զրէի, եւ յայտնի՝ ընդունէն ու ստորոշութեանց հնութենէն եւս: Արդ, վկայուհին բանտի եւ կապանքի մէջ, կ'ըսուի հոն, իրեն միւրիւրիչ ունէր «Աղօթանոց փոքրիկ», որ չէր կրնար ըլլալ յանկարծահարմարութեան մը այն զնդանին ու չլթաներուն մէջ, չնորհուած ուրացող եւ անազորոյն մէջ, չնորհուած որ խաչ մ'ալ կար արդէն «առաջի տիկնոջն» (43, 44), որ անոր համար եկեղեցւոյ տեղ բռնած էր: Հետեւաբար անոր Աղօթանոցն ուրիշ բան չէր՝ բայց գիրք աղօթից. եւ այն՝ հասարակացը, ըստ որում առանձնական աղօթազրբեր չլային տակաւին, ինչպէս զգալի է մեր աղօթքի ընդհանուր նկարագրէն:

Գրէն՝ զոր տեսանք: Պատմիչը նոյն փաղաքական ձեւով կը յիշեցնէ իշխանութիւն միւս մատենիկն ալ, «աւետարան մի փոքրիկ»՝ յիշատակ իւր հաւուն Ս. Սահակայ (27), ցուցնելով երկու գրքերուն զուգակցութիւնը եւ արտաքին նմանութիւնն ալ:

Մովսէս Երզնկացի՝ 1255ին՝ նոր կոչում մ'ունի մատենիս, Աղօթամատոյց (195), զոր կը կրարէին նաեւ 1284ի եւ 1315ի ժամագրքերու գրիչները՝ Մարտիրոս եպոս. եւ Մանուէլ, Միւրիւր Այրիվանէցին նոյն ԺԳ. դարուն (56) եւ 1465ի(1) եւ 1598ի ժամագրքերու ընդօրինակողները: Վանական վարդապետ ԺԳ. դարուն Գիրք աղօթից կ'ըսէ(2): Թովմա Մեծոփեցի իր ժամագրի յիշատակարանին մէջ կը կոչէ «գիրքս հասարակաց աղօթից». Օչին թագաւորի ժամագիրքը՝ Սաղմոսարան (101), ըստ որում խառն է սաղմոսներու հետ. եւ Ժմգ. թ. 1575՝ ԺԵ. դարու՝ Ժամագիրք: Մենք նախամեծար համարեցանք զրոշմէլ մեր ուսումնասիրութեան ճակատը Աղօթամատոյցը՝ քան երկրպագոյն Աղօթանոցը, որ կրնար չլիթուիլ աղօթատեղիին հետ՝ որուն իմաստն ալ ունի:

Այժմ անցնինք տեսնել իր յօրինումը ըստ իւրաքանչիւր շրջանի՝ որ ունին իրենց բաժինն անոր զարգացման մէջ:

(1) Սիրմէեան Ա. Արք., Ցուցակ հայ. ձեռ. Հալ. Ա. 170:

(2) Արարատ ամս. 1902, 30:

ԳԼՈՒԽ Բ.

ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑԸ Դ-Ե ԴԱՐԵՐՈՒՆ

1. Օտարներու քով. — 2. Հայոց մէջ. — 3. Բարեփոխում. — 4. Զանգաւ. — 5. Երգեր. — 6. Օրհնութիւն. — 7. Աղօթամատոյց. — 8. Պատկեր պաշտամունքի:

Այս առաջին շրջանի քննութեան համար մեզի աղբիւր ունինք ժամանակակից կամ մերձաւոր ու տեղեակ հայ մատենագիրներ — միւս եկեղեցիներու հին սովորութիւնները՝ ճշդուած են եւրոպացի բանասէրներու կողմէ, որոնց եւ մերիւններուն միջեւ գտնուած կապն զգացուցինք կանխաւ — եւ Ս. Ղազարու մատենադարանին քանի մը սաղմոսարաններ, որ վճարակէն ստուգելու հասարակաց աղօթքի առաջին վիճակը:

1. Օտարներու քով. — Ըստ վկայութեանց Եւսեբիոսի, Բարսիլի եւ ուրիշներու ու մեր հայրերուն, հասարակաց աղօթքի գլխաւոր բաժինը կը կազմէին Դաւթի Սաղմոսները՝ բովանդակ քրիստոնէութեան մէջ: Հետեւաբար անոնք էին մեծագոյն տեղը բոնողն աղօթամատոյցներու մէջ, թէեւ անհասարակ չափով: Անոնց քով գետեղուած էին նաեւ Օրհնութիւնները, հաւաքուած Հին ու Նոր Կրտակարաններէն, որոնց ակնարկեցին Ոսկերեան եւ մեր Հայրերը: Ատոնց մէջ կը խառնուէին նաեւ աղօթքներ եւ ընթերցումներ՝ որ դուրս կը մնային Աղօթանոցէն, եւ ուղղակի Ս. Գրքէն կը կատարուէին:

ա. — Մենք այդ նիւթերը նկատեցինք ընդհանուր յիշատակութեամբ մը. հոս հարկաւոր է քննել՝ թէ ի՞նչ սոճով ու չափով կը պաշտուէին: Ժամակարգութեան կազմուելու շրջանն էր ասիկա՝ ընդհանրական եկեղեցւոյ մէջ. եւ նախանձայոյց

հովիւներ կ'աշխատէին հասարակաց աղօթքը բարեձեւել ու յարմարեցնել իրենց հաւատացեալներու պէտքերուն: Ասկէ կը ծագէր մեծ անհասարակութիւն մը անոնց միջեւ, պահելով հանդերձ որոշ նմանութիւններ, ինչպէս գիտեցինք եւ կանխաւ: Տեսնենք քանի մը օրինակներ այդ կացութեան:

Դ. զարու կիսուն, Պաքոմէոսի վանոններն իւրաքանչիւր ժամուն կը նշանակէն տասներկու սաղմոս, որոնց մէկ տունը կը կրկնուէր, — մեր կցորդը կոչածը, — եւ սաղմոսներուն կը պատասխանէին «Ալէլուիա» երգով⁽³⁾: Եգիպտական սովորութիւնն էր ասիկա: Եւսեբիոսի Կեսարացւոյ անունով «Կանոնք սաղմոսաց տունը՝ ճանն եւ գիշերոյ» ունին առաւօտեան ժամու երեք սաղմոս. ԿԲ, ՃԽ, ՃԽԱ. եւ երեք ալ ձրագալոյցի (երեկոյեան) ժամուն. ՃԻԹ. ՃԽ. ԺԲ (կամ ՃԺԲ)⁽⁴⁾: Առաքելական Սահմանադրութիւնները, ծանօթ նոյն զարու վերջին քառորդէն, կը նկարագրեն երեկոյեան պաշտօնն այսպէս. ձրագալոյցի սաղմոսը, սարկաւազին քարոզակերպ աղօթքը՝ բոլոր ընկերական դասակարգերու համար. յետոյ կարճ մաղթանք մը, աղօթք մը՝ եպիսկոպոսէն, եւ անոր օրհնութիւնը՝ ժողովուրդին (Ը. ԼԵ): Նոյն էր Առաւօտեանն ալ, յաւելումով Փառք ի բարձունս երգին (Ը. ԼԵ):

Եթերիա կը նկարագրէ Երուսաղէմի Գիշերային ժամերգութիւնն այսպէս. «Ասին երգը եւ փոփոխին սաղմոսը. սոյնպէս եւ փոխը. եւ գինի միւս միւս յերգոցն մատուցանի աղօթք» քահանաներու եւ սարկաւազներու կողմէ (512): Պաշտամունքի նիւթերը նոյն են եւ միւս ժամերուն (515), բայց ընտրանք եւ օրուան յիշատակին համեմատ (516): Առաւօտ եւ երեկոյ սարկաւազը կը յիշէր ամէնքը, եւ ուղածներն յանուանէ եւս, որուն ժողովուրդը կը պատասխանէր՝ «Տէր ողորմեա» (513, 514): Նոյնպէս ընթերցումներ Ս. Գրքէն ըստ

յիշատակի տեղւոյն եւ օրուան (524, 525), եւ կիրակի օրը նաեւ քարոզներ (516): Ապա կ'աղօթէր եպիսկոպոսը, կ'օրհնէր բոլորը, եւ աջը փու տար ի համբոյր, որով կը վերջանար պաշտօնը (513-14):

Աթանասի անունով վասն կուսութեան ճառը՝ Գիշերային ժամը կը կազմէ սաղմոսներէ՝ ուղած չափով. յետ իւրաքանչիւր սաղմոսի՝ աղօթք ու ծնրագրութիւն մը. եւ յետ ամէն երեք սաղմոսի՝ «Ալէլուիա»: Գիշերն Ողորմեա ինձ (Ծ) սաղմոսը. եւ արեւը ծագելուն՝ Աստուած Աստուած իմ (ԿԲ). եւ ապա Երից մանկանց երգն ու Փառք ի բարձունս: Կը յաջորդէին միւս ժամերը, որոնցմէ «երկարագոյնն» էր, վճռէ, Երեկոյեանը⁽⁵⁾:

Կասիանոս՝ դաստիարակուած Բեթղէ-հէմի մենաստանին մէջ, եւ ապա հիմնադիր երկու վանքերու ի Մարսիլիա՝ արեւելեան կարգով, մինչ 415-417 թուականին կը գրէր իր սահմանադրութիւնները, կ'ըսէ թէ Պաղեստինի, Միջագետքի եւ Բոլոր Արեւելեան մենաստանները (բացի Եգիպտոսէ) զուրկ էին համաձեւութենէ սաղմոսերգութեան մէջ, եւ կը տարբերէին դաւառէ գաւառ, ըստ իւրաքանչիւր սովորութեան, ըսելով Գիշերը տասներութ, քսան, երեսուն եւ երեքսն աւելի սաղմոսներ, զորս չի ճշտեր: Բնականապէս քաղուածով, ինչպէս կը հետեւի այդ անհասարակութենէն. եւ անոնց վրայ աւելցընելով փոխեր (ἀντιφωνος) պէս պէս եղանակներով: Երրորդ, Վեցերորդ եւ Ինըներորդ ժամերուն կը պաշտէին երեք երեք սաղմոս՝ աւելի ընդհանրացած սովորութեամբ. եւ ոմանք՝ երեք, վեց եւ ինը սաղմոս, ըստ ժամերու թիւին⁽⁶⁾: Իսկ Պաղեստինի մէջ իւրաքանչիւր երկու սաղմոսին կը յարէին աղօթք մը. եւ եռամասն մեծ աղօթք մ'ալ բոլոր եղբայրութեան կողմէ՝ կը կնքէր մէկ մի ժամերգութիւն:

Առաւօտեան պաշտամունքի մասն էին Ողորմեա (Ծ), Աստուած Աստուած իմ (ԿԲ) եւ Օրհնեցէք զՏէր յերկնից խումբը (ՃԽԸ-ՃԾ), որոնք ապա նորակերտ Արեւագալին կ'անցնին⁽⁷⁾:

Սինայի վանքն Երեկոյին պաշտօնը կը սկսի Փառք Հօրով եւ «Միառարանութեամբ». եւ ապա «Երանելի է այր սաղմոսը (Ա. կամ ՃԺԱ), Տէր կարգացի (ՃԽ), Լոյս գուարք երգը, աղօթք մը, եւ Սիմէոնի երգն Արդ արձակեալ⁽⁸⁾: Ունի գիշերային աղօթքն ալ, բայց խառն հսկման հետ՝ զոր պիտի տեսնենք առանձին:

ՅՀ. Ոսկերեանի վանականներուն սաղմոսները՝ որոնցմէ կը կոչէ մի մի կամ երկու տուն, — էթէ այդչափ միայն էին, — քաղուած են խառն ձեւով, եւ են հետեւեալները. ՃԼԳ, Զ, ՃԱ, Ը, ՃԽԳ, ԽԸ, ԿԵ, ՃԺԸ, ԻԲ, Լ, ԽԳ, ՃԽԸ, որ է Պաքոմէանց տասներկու թուով, եւ Եսայիի ի գիշերաց կանխէ օրհնութիւնը (ԻԶ, 9): Բոլոր ատոնք յատուկ էին առաւօտեան ժամերգութեան, եւ յայտնի է՝ թէ որոնք էին միւս ժամերուն «սաղմոսը եւ օրհնութիւնը», որ նոյն սոճով քաղուած էին անկասկած: Նոյն վարդապետը կը խօսի նաեւ Անտիոքի եկեղեցւոյն ժամերգութեան մասին, բայց յիշելով շատ քիչ բան. Տէր կարգացի սաղմոսը (ՃԽ) Երեկոյին, Աստուած Աստուած իմ (ԿԲ) Առաւօտուն, եւ աղօթք մը ամէնուն համար երկու ժամերուն⁽⁹⁾:

Առանձին կարեւորութիւն մ'ունի Հայերու համար Կեսարիոյ եկեղեցւոյն սովորութիւնը, որ մերն ալ էր սկիզբէն, եւ զոր կը նկարագրէ Ս. Բարսեղ իսկ, խօսելով Գիշերային պաշտամունքի մասին, որ կը սկսէր միջագիշերէն: Յետ դումարման ժողովուրդին կը սկսէր «սաղմոսերգութիւնը», զոր կը կատարէր բովանդակ եկեղեցին, բաժնուած երկու դասերու եւ

(3) Բէռլին, Ա. 110-111:

(4) Հայրաբոս. յուն. ԻԳ. 1395:

(5) Բէռլին, Ա. 122-123:

(6) Անդ. 141, 145:

(7) Անդ. 143, 149:

(8) Անդ. 183:

(9) Հայրաբոս. յուն. ԾԵ, 426-427. ԿԱ, 530:

փոխ առ փոխ պատասխանելով իրարու: Յետոյ աղօթակիցի մը երգել կու տային «զօրհնութիւնն, եւ այլք պատասխանեն» տուն առ տուն: Եւ այսպէս կ'անցնէին գիշերը «պէս պէս սաղմոսերգութեամբ», «յոր խառնեն եւ զաղօթս»⁽¹⁰⁾, ինչպէս եւ «զընթերցմունս», «յորժամ տիւն սկսանի»⁽¹¹⁾:

Այս բոլոր նկարագրութիւնները մասնական եւ անկատար են, այնպէս որ չէ կարելի որոշ գաղափար մը կազմել մէկ կամ միւս տեղոյն օրական ժամերգութեանց ամբողջութեան վրայ, եւ ոչ ալ կը ներկայացնեն որեւէ ժամու կատարեալ պատկերը, զոր կարողանայինք համեմատել այն պաշտամունքին հետ՝ զոր պիտի կազմենք: Այն միայն ստորջէ՝ թէ սաղմոսները կը պաշտուէին քաղաքացիական հասարակարգի շրջանում: Անհամաձայնութիւն նաեւ երգերուն, աղօթքներուն եւ ընթերցումներուն մէջ՝ որ կային ամէնուրեք եւ կը խառնուէին սաղմոսներուն հետ:

Բ. — Այս բոլորէն աւելի կարեւոր է մեզի Բրիտանական Թանգարանի նշանաւոր Աղեքսանդրեան Հին Կտակարանի յունարէն օրինակը, Ե. դարէն, ուր՝ սաղմոսներէն վերջ կան տասներեք օրհնութիւններ, անոնց հետ պաշտուելու համար եկեղեցւոյ մէջ. եւ են հետեւեալները. ա, Իսրայէլացւոյ Օրհնեսցուք գտէր (Ելք՝ ԺԵ, 1-19). Բ, Մովսէսի Նայեցարուք (Բ. օր. ԼԲ, 1-43). Գ, Աննայի Հաստատեցաւ (Ա. Թագ. Բ, 1-10). Դ, Եսայիայի Ի գիշերաց (ԻԶ, 9-20). Ե, Յովնանու Ի նեղութեան (Բ, 3-10). Զ, Ամբակումայ Տէր զուր քն (Գ, 2-19). Է, Եղեկիայ Եսասացի (Ես. ԼԸ, 10-20). Ը, Մանասէի Տէր ամենակալ. Թ, Ազարիայ Օրհնեալ Ես (Դան. Գ, 26-45). Ժ, Երեց մանկանց

Օրհնեցէք (անդ՝ 52-88). Ժա, Մարիամու Մեծացուցէ (Ղկ. Ա, 46-54). Ժբ, Սիմէոնի Արդ արձակեալ (Ղկ. Բ, 29-32). Ժգ, Ջաքարիայ Օրհնեալ տէր (Ղկ. Ա, 68-79) (12):

Այդ օրհնութիւնները Աղեքսանդրիոյ եկեղեցւոյն սեպտականութիւն չէին, այլ կային ու կը յիշուին Ափրիկէի, Սինայի, Անտիոքի եւ Կապադովկիոյ պաշտամունքներուն մէջ. մէկ խօսքով՝ ամէն կողմ. բայց թիւով ու կիրարկման ձեւով անհամասար էին տեղէ տեղ: Ափրիկէի նոյնպէս յայտնի է, եւ թիւով տասն էին. Թ. թը՝ հաւասար Աղեքսանդրիոյ, եւ երեքը տարբեր. Օրհնեսցուք գտէր, Մովսէսին թուոց մէջ (ԻԱ, 18), Նայեցարուք, Դ. բովրայի Զարթիք գարթիք (Դատ. Ե, 12), Երեմիայի Յիշեալ տէր (ԺԱ, 15), Օրհնեալ Ես տէր Աստուած, Ես սասցի, Տէր զուր քն (սկսեալ 4 տունէն), Տէր ամենակալ եւ Ի նեղութեան (13): Սինայեցիք ըստ նկարագրութեան իրենց աղօթքներուն, որ կը համարուի Զ. դարու, հսկման մը երկրորդ պահուն վերջը կը նուագեն «զինն Երգս կամ զօրհնութիւնս ըստ սովորութեան» որ կանն ի վախճանի սաղմոսաց»⁽¹⁴⁾. ուրեմն բոլորը միասին կամ յաջորդաբար: Յոյն արդի ժամագիրքն ունի նոյնքան եւս օրհնութիւն՝ այս կարգաւ. ա, Օրհնեսցուք զՏէր. — Բ. Նայեցարուք. — Գ, Հաստատեցաւ. — Դ, Տէր զուր քն. — Ե, Ի գիշերաց. — Զ, Ի նեղութեան. — Է, Օրհնեալ Ես տէր Աստուած. — Ը, Օրհնեցէք ամենայն գործք. — Թ, Մեծացուցէ, որուն կը յարի Աղօթք Ջաքարիայի:

Ոսկերեան իր վանականներուն գեղեցիկ նկարագրին մէջ կ'ըսէ ընդհանուր բացատրութեամբ՝ թէ հաւախօսին ելլելով «երգեն զմարգարէական օրհնութիւնս» (Συνοδός). նոյնպէս թէ «զառաւօտին զաղօթսն եւ զօրհնութիւնս միշտ

կատարեսցեն»։ ուր օրհնութեան մէջ կ'իմանայ սաղմոսներն ալ՝ զորս յատկապէս կը յիշէր: Նմանապէս ցերեկի չորս ժամերուն՝ «ըստ իւրաքանչիւր մասանցն, կ'ըսէ, սաղմոսիւք եւ օրհնութեամբ պատուեն զԱստուած»։ օրհնութիւնը ժամերուն պէս յոգնակի ըստ ընադրին: Սակայն հաւախօսի պաշտամունքի բաժնին մէջ նշանակեց մէկ օրհնութիւն միայն, Եսայիին, տալով մեզ զուշակել՝ թէ ամէն ժամուն մէկ օրհնութիւն կ'երգէին: Անտիոքեան դրութեան կը հետեւէր նաեւ Կապադովկիայ, որուն ծէսը նոյն քաղաքէն կը բղխէր, ինչպէս կը գրեն Հ. Լիլլերկը⁽¹⁵⁾ եւ ուրիշներ. որով եւ Ս. Բարեկիլ մէկ օրհնութիւն միայն կը նշանակէ Գիշերային ժամուն, լուծեամբ անցնելով միւս ժամերուն վրայէն: Նոյնպէս կը թուի միւս վիճակներուն մէջ ալ:

2. Հայոց մէջ. — Յետ այս կարեւոր տեղեկութիւններուն, որ պիտի առաջնորդեն մեզ, կ'անցնինք խուզարկել մեր Աղօթամատոյցին վիճակը այս շրջանիս: Մեր առաջին հարցումը այս կ'ըլլայ՝ թէ յիշեալ բաղամապիսի զանազանութիւններուն մէջ որո՞ւն աւելի կը նմանէր հայ աղօթքը, երբ մեր պաշտամունքը տակաւին կը վատարուէր յունարէն եւ ասորերէն լեզուներով: Անշուշտ մեր Հայերը սկսան կապադովկեան դրութեամբ. իսկ երբ հալածուեցաւ յունարէնը, ասորերէնի հետ, ի՞նչ փոփոխութիւն եկաւ հասանի հետ, ի՞նչ փոփոխութիւն չէ գուշարակաց աղօթքին մէջ, զիւրին չէ գուշարակի: Ընդհակառակն յետ անոր հայացման, կերպով հալածուեցաւ յունարէնը, ասորերէնի հետ, ի՞նչ փոփոխութիւն եկաւ հասանի հետ, ի՞նչ փոփոխութիւն չէ գուշարակաց աղօթքին մէջ, զիւրին չէ գուշարակի: Ընդհակառակն յետ անոր հայացման, կերպով հալածուեցաւ յունարէնը, ասորերէնի հետ, ի՞նչ փոփոխութիւն եկաւ հասանի հետ, ի՞նչ փոփոխութիւն չէ գուշարակաց աղօթքին մէջ, զիւրին չէ գուշարակի:

ա. Պէտք է գիտնալ նախ՝ թէ մեր առաջին Աղօթամատոյցն էր Սաղմոսարանը, անջատուած Կտակարանէն, եւ ճշտուած իր պաշտօնով Ղազար Փարպեցիէն, որ կը յիշէ թէ Արտագու զաշտին մէջ քահանայական դասը հայ զօրական-

ներ կը խրախուէր «Սաղմոսարանին գործայիւք» (204), զոր միասին կը շրջեցնէին իրեն ուրոյն մատեան մը: Եւ շատ բնական էր այդ, նկատելով որ մեր քով եւս պաշտօնագրութեան գլխաւոր բաժինը սաղմոսներն էին: Յետ Ե. դարուն, աղօթական մասերուն տակաւ բաղմանալովն էր որ Աղօթամատոյցը գաղտնեցաւ Սաղմոսարանէն, որուն մէջ իր նախկին վիճակին հետքերը կը նշմարենք տակաւին: Աչքի առջեւ ունիմ ասոր Երեք հնագոյն օրինակներ, պահուած ի Ս. Ղազար, եւ անհաւասար իրարու մէջ: Առաջինն է Երկաթագիր, շատ պակասաւոր եւ անթուական (թ. 1651). Երկրորդն է ամբողջ՝ 1356ին (թ. 153), գրուած ի Մերութիւն, եւ երրորդն 1455ին (թ. 149), ի Տրապիզոն: Աւելի կրտսեր օրինակներ ալ կան յօրինուածով զանազան կողմեր:

Ասոնց մէջ Դաւթի հարիւր յիսուն սաղմոսները բաժնուած են ութ կանոններու, եւ իւրաքանչիւր կանոն եօթն գուրդաներու, որոնց իւրաքանչիւրը կաղմուած Երկուքէն մինչեւ վեց սաղմոսներէ՝ ըստ ասոնց ընդարձակութեան: Իսկ իւրաքանչիւր կանոն կ'աւարտի մէկ մէկ եւ մերթ երկու մարգարէական օրհնութեամբ՝ այսպէս. ա. Երանեալ (Ա. ԺԷ). օրհ. Օրհնեսցուք (Ելք՝ ԺԵ, 1-21). — Բ. Երկիմբ պատմեմ (ԺԸ-ԼԵ). օրհ. Նայեցարուք (Բ. օր. ԼԲ, 1-21). — Գ. Մի՛ նախանձիր (ԼԶ - ԾԴ). օրհ. Զի հուր բորբոքեցաւ (Բ. օր. ԼԲ, 22-38) եւ Ծանկեալ (անդ՝ 39-43). — Դ. Ողորմեա ինձ (ԾԵ-ՀԱ). օրհ. Հաստատեցաւ (Ա. Թագ. Բ, 1-10). — Ե. Իբրեւ զի (ՀԲ-ԶԸ). օրհ. Ի գիշերաց (Ես. ԻԶ, 9-20). — Զ. Տէր ապաւեն (ԶԹ-ՃԵ). օրհ. Ես սասցի (Ես. ԼԸ, 10-20). — Է. Խոստովան եղերուք (ՃԶ-ՃԺԸ). օրհ. Օրհնեցէք զԱստուած (Ես. ԽԲ, 10-13, ԽԵ, 8) եւ Ի նեղութեան (Յովն. Բ, 3-10). — Ը. Ի նեղութեան (ՃԺԹ-ՃԽԷ). օրհ. Տէր զուր քն (Ամբ. Գ, 2-19):

(15) Կարբու, ԺԱ, 633-634:

(10) Անդ՝ ԼԲ, 764:

(11) Անդ՝ ԻԹ, 464, 484:

(12) Հրատ. ի Լոնտոն, 1886, հտ. Գ. 565-569:

(13) Կարբու, Ա. 639:

(14) Բեռլին, Ա, 183:

